

ՀԱՅ-ՌՈՒՍԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

18-ՐԴ դարու

Տասնյոթերորդ դարից սկսած՝ հայ վաճառականները ավելի հաճախ էին լինում Ռուսաստանում։ Քանի որ Հայաստանում տնտեսական և քաղաքական ծանր պայմաններ էին ստեղծվել, հազարավոր հայեր հեռանում էին հայրենիքից՝ ապրելու և աշխատելու պայմաններ փնտրելով օտար ափերում։ Տարբեր երկրներում, այդ թվում և Ռուսաստանի տարբեր նահանգներում, ստեղծվում են հայկական գաղթօջախներ։ Տեղացիների հետ շփվելու համար անհրաժեշտ էր ռուսաց լեզվի իմացություն։ Իսկ դրան կարող էին նպաստել ռուս-հայերեն և հայ-ռուսերեն թարգմանական բառարանները։ Սկզբում դրանք տարածվում էին ձեռագիր վիճակում (ինչպես Եղիազար Տեր-Կարապետյան Առնշեցու «Համառոտ բառարան ի հայոց ի ռուսաց լեզու» աշխատությունը), իսկ 18-րդ դարի վերջին երևան եկան առաջին տպագիր բառարանները։

1788թ. օգոստոսի 1-ին Պետերբուրգում Գրիգոր Խալդարյանի տպարանում, լույս տեսավ Կղեոպատրա Սարաֆյանի «Գիրք, որ կոչի բանալի գիտութեան» գիրքը։ Հեղինակը ժամանակի նշանավոր այրերից մեկի՝ աստրախանցի մետաքսի գործարանատեր, Կասպից ծովի վրա ծովային նավեր կառուցելու արտոնություն ունեցող Մովսես Սարաֆյանի դուստրն էր։ Մ.Սարաֆյանը՝ այդ մեծ հայրենասերը, 1769թ. հունիսի 8-ին (1768-1774թ.թ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ) Ռուսաստանի արտաքին գործերի կոլեգիային էր ներկայացրել Հայաստանի ազատագրման և անկախության ծրագիր, որին նախօրոք հավանություն էին տվել ռուսահայ նշանավոր գործիչները։

Մ.Սարաֆյանը ծնվել է 18-րդ դարի 50-ական թվականների վերջին Աստրախանում։ 80-ական թթ. նա տեղափոխվել է և հաստատվել Պետերբուրգում։ Այստեղ հրատարակվող «Дамскѣхъ журналъ»-ը 1830թ. Սարաֆյանի մասին գրել է. «.....այս կին գրողը հայտնի է մեզ մոտ որպես խելացի գիտնական հայուհի, որ ձգտել է իր հայրենակիցներին ծանոթացնել ռուսական լեզվին և

որի համար հայերեն լեզվով հեղինակել է դասագիրք, որ պարունակում է բանալի գիտության, այբբենարան, բառարան և բարոյախոսական որոշ կանոններ: 1788թ. ապրելով Սանկտ Պետերբուրգում՝ ինքն էլ այդ գիրքը թարգմանեց ռուսերենի և տպագրեց խալդարովի տպարանում»¹:

Հեղինակը գիրքը նախատեսել է «ի յօգուտ մանկանց և ամենից, որք ունին զկարօտութիւն և զպիտոյս»²: Սարաֆյանի բառարանը ունի հայ-ռուսերեն և ռուս-հայերեն բաժիններ: Դրանցից առաջինը պարունակում է մոտ 2.000 բառահոդված, իսկ երկրորդը՝ մոտ 2.500:

Աշխատությունը բաղկացած է հետևյալ բաժիններից. «....մասնաւոր այբբենարան, մասնաւոր բառարան. և ըսկզբունք քաղաքական ուսմանց. արարեալ և թարգմանեալ ի ռուսաց լեզուէ ի հայ բարբառ, և ի հայոց լեզուէ ի ռուսաց բարբառ....»³: Հայերեն և ռուսերեն այբուբենները ներկայացնելուց հետո հեղինակը բերում է նախ՝ հայերեն միավանկ, երկվանկ, եռավանկ, քառավանկ, հնգավանկ և վեցավանկ բառեր և դրանց ռուսերեն տառադարձությունը, ապա՝ ռուսերեն միավանկ, երկվանկ, եռավանկ, քառավանկ, հնգավանկ և վեցավանկ բառեր և դրանց հայերեն տառադարձությունը: Ինչպես երևում է, գիրքն ստեղծված է որպես ինքնուսույց: Դրա վկայությունն է նաև այն, որ բառարանում թարգմանվող բառից հետո տրվում է դրա տառադարձությունը թարգմանված լեզվով: Այսպես՝ այսօր-аѣсopъ, գերազանց-геразанѣъ, թարգմանիչ-таpгманичъ, կայծակ-каѣцакъ, ուրբաք-урбатъ, вчера-վչերայ, дворъ-դւոր, дѣмъ-դիմ, жизнь-ժիզն, лежать-լեժատ, мальчикъ-մալչիկ, отецъ-օտեց և այլն:

Սարաֆյանի բառարանում հստակ արտահայտված է 18-րդ դարի վերջում իշխող այն միտումը, որ բարբառներում հանդիպող օտարալեզու (թուրքերեն և պարսկերեն) տարբերակները փոխարինվեն զրաբար կամ նորակերտ հայերեն համարժեքներով: Մեր խոսքը հաստատելու համար կարելի է նշել մի քանի օրինակներ՝ աքազիլ կամ լակլակ, վարօղ կամ բարութ, կեռաս կամ գիլաս, հովիւ կամ չօբան, ծիթալտուղ կամ գէթուն, հրացան կամ թուանք, կէս ժամ կամ կէս սահաթ, կռան կամ չաքուչ, խոհանոց կամ աշխանայ, իւղ կամ եղ, ժամացոյց կամ սահաթ և այլն:

Միայն մեկ դեպքում է բառարանի հեղինակը շեղվել այս սկզբունքից: Ռուսերեն обезьяна բառի թագմանությունը ներկայացնելիս տալիս է օտա-

րալեզու մէյմուն ծնը, իսկ կապիկ համարժեքը բացակայում է:

Սարաֆյանի գրքում նույն բառը հանդիպում է տարբեր ուղղագրություներով: Այսպես՝ աքլօր-աքլոր, գագադ-գագաթ, գիւղ-գիւղ, դէֆին-դէֆին, դըժոխք-դոխք, դեքտեմբեր-դեկտեմբեր, ճանճ-ճանջ, պարտկ-պարտք, դուստր-դուսդր և այլն: Հավանաբար, սա պետք է բացատրել նրանով, որ 18-րդ դարի վերջում արևելահայ աշխարհաբար լեզուն դեռ ձևավորման վիճակում էր, և նման բազմաձևությունները տարածված էին:

Բառարանին հաջորդում է գրույցների բաժինը, որտեղ հեղինակը դիմում է ժամանակի խոսակցական լեզվին: Այդ են վկայում հետևյալ հատվածները.

«- Ուր ես գնում հրամանքդ այտպես կանուխ:

-Ես գնում եմ դպրատունն:

-Յորում ժամու պարտ իս հրամանքդ տեղն լինիլ:

-Երթ որ զանգակն հարէ» (էջ 245),

կամ՝ «-Տէր իմ հրամանոցդ կոչեն ի ճոշել:

-Ո՞ր ժամն է:

-Կէս ժամն է առաջի ժամու:

-Վասն է՞ր այտպես շուտ ճաշեն այսօր:

-Վասն այն, որ հրամանոցդ մեծ եղբայրն պարտ է գնալ գիւղն» (էջ 247) և այլն:

Սարաֆյանի գրքի երկրորդ մասն ունի ուսուցողական և դաստիարակչական նշանակություն: Հեղինակը մանուկներին տեղեկություններ է տալիս, որոնք ունեն ոչ միայն քաղաքավարական, այլ նաև կրոնական բնույթ: Այսպես՝

«Հարց. քանի՞ աւուրք զոն ի շաբաթու: Պատասխանի՝ եօթն. կիւրակի, երկուշաբաթ, երեք շաբաթ, չորեք շաբաթ, հինգ շաբաթ, ուրբաթ, շաբաթ» (էջ 261), կամ՝

«Հարց. ի քանի՞ մասունս բաժանին յայտնի եղեալ մասն երկրագնդի. պատասխանի՞ չորս. Եւրոպայ, Ասիայ, Աֆրիկայ, և Ամերիկայ» (էջ 263) և այլն:

Ձավակները պարտավոր են բարձր պահել ծնողների պատիվը և խոնարհ լինել. «Որդիք ծնողաց իւրեանց ցուցանեն շնորհակալութիւն, խոնարհութիւն, և պատիւ» (էջ 258):

Մարդը պարտավոր է սովորել և իր գիտելիքները բազմապատկել, որովհետև

«այր իմաստուն յամենայն ժամ կարող է գտանիլ յաշխատանս» (էջ 261), իսկ ծուլությունը միայն «վատ ուսուցիչ» է: Նրանից են ծնվում բոլոր արատները: Չի կարելի ստել, որովհետև «որ ոչ ստե՛ն նորա ամեն խօսիցն հաւատան մարդիկք» (էջ 265): Ամեն ինչից վեհը հայրենիքն է, և մարդու առաջին պարտականությունն է, «որ ծառայէ իւր հայրենեացն» (էջ 255): Եթե հեղինակը ինքը հնարավորություն ունենա ծառայելու իր հայրենիքին և չանի, ապա «ես ինքս ինձ անտես կանէի» (էջ 255):

Մարդը պիտի կարողանա լսել դիմացինին և ընդունել իր հասցեին ասված ճիշտ քննադատությունը, որովհետև «խղճալի է նա՛ որ ի լսելն զճշմարտութիւն՝ խռովի» (էջ 274): Յուրաքանչյուր ոք ինքը պիտի ծգտի ուղղել սեփական թերությունները, քանի որ եթե մարդը չցանկանա ուղղվել, ոչ ոք այդ անել չի կարող. «Դժուարին է ուղղել զոք՝ եթ ինքնին ոչ աշխատիցի» (էջ 274):

Աշխարհում կատարյալ ոչինչ չկա, որովհետև «Աստուած է միայն կատարեալ» (էջ 264): Իսկ մարդը անընդիստ պիտի կատարելագործվի, նոր գիտելիքներ ձեռք բերի, և դրան ընդունակ է յուրաքանչյուրը, քանի որ անգամ «այր միջակ գիտութեամբ եթ աշխատեսցի, կարէ հմտանալ» (էջ 267):

Կ.Սարաֆյանի գրքի տպագրությունից ընդամենը մի քանի ամիս անց՝ նույն թվականի դեկտեմբերի 2-ին, լույս տեսավ հրատարակիչ, թարգմանիչ և բառարանագիր Գրիգոր Խոջամալի Խալդարյանի «Գիրք, որ կոչի շաւիղ լեզուագիտութեան» գիրքը: Ծնված լինելով հայրենիքից հեռու՝ Նոր Զուղայից Գնդկաստան գաղթած վաճառականի ընտանիքում՝ Գր.Խալդարյանը միշտ մեկ նպատակ է հետապնդել՝ ստեղծել հայկական տպարան և հրատարակել հայերեն գրքեր: 1780թ. Լոնդոնում տպագրել է «Դաւանութիւն հաւատոյ» գիրքը, իսկ 1781-ին Պետերբուրգում լույս է ընծայել Ռուսաստանում առաջին հայերեն գիրքը՝ «Այբբենարանը»: Հետագա մի քանի տարում տպագրել է ևս 10 գիրք, Ներսես Շնորհալու «Հաւատով խոստովանիմ» աղոթքը թարգմանել ռուսերեն: Խալդարյանը մահացել է 1787թ.: Նրա մահվանից մեկ տարի անց իր հիմնադրած տպարանում տպագրվեց «Շաւիղ լեզուագիտութեան» բառարանը: Ամուսնու մահվանից հետո գիրքը հրատարակել է կինը՝ Կատարինե Զաքարովնան, իսկ առաջաբանը գրել է Թադևոս վարդապետ Կոստանդնուպոլսեցին:

Առաջաբանում նշվում է, որ բառարանի հեղինակին անհանգստացնում

եր այն փաստը, որ բազմաթիվ հայեր տեղափոխվում էին Ռուսաստան՝ բնակվելու, սակայն չգիտեին ռուսաց լեզուն: Այդ պատճառով էլ նա որոշեց ստեղծել բառարան նրանց համար. «Որով ձեռնամուխ եղեալ ի գործ օգտակար՝ և բազմաց համբուրելի՝ սկսանէր ստեղծաբանել զմեծաց գովութեանց արժանաւոր զՏետրակս հարկւոր բառից՝ պերճաբան լեզուին Ռուսաց թարգմանաբար ի մեր բարբառ»⁴: Սակայն հեղինակի սկսած ազգանվեր գործը նրա մահվան պատճառով մնաց թերակատար, և միայն Ռուսաստանի հայկական թեմի առաջնորդ Յովսեփ արքեպիսկոպոսի հրամանով ու հանգուցյալի կնոջ ջանքերով իրականություն դարձավ գրքի հրատարակման գործը: Իսկ գրքի «Շաւիղ լեզուագիտութեան» վերնագիրը պատճառաբանված է նրանով, «զի ըստ շաւղացն հետոց՝ ընթերցողացն յառաջագոյն՝ ունի հանել զհետևողն ինքեան՝ ի յուղիղն և ի յարքունականն պողոտայ՝ կատարեալ իմաստից, պանծալի և պերճ բարբառոյն Ռուսաց»⁵:

Ըստ մարդկային գործունեության, բնության ու հասարակական կյանքի տարբեր բնագավառներ անվանելու՝ բառարանների բառապաշարը կարելի է բաժանել հետևյալ խմբերի.

1. բնության երևույթների, աշխարհագրական վայրերի, երկնային մարմինների, բնական հանածոների, բնակավայրերի անուններ՝ անապատ, անձրև, արև, գետ, գետին, գիւղ (գիւղ), երծաթ, երկաթ, լեռան, լուսին, ծով, կայծակ, կարկուտ, հող, ծին, ոսկի, որոտումն, պղինձ, սար, քար և այլն,

2. մարդու մարմնի մասերի, մարմնի կենսագործունեությունը ապահովող նյութերի անվանումներ՝ ականջ, աղիք, ատամ, արիւն, գլուխ, երես, բև, թոք, թուք, ուս, լեարդ, լսելիք, ձեռք, ձեռն, ճակատ, ճարպ, ոսկր, ոտն, սիրտ, ստամոքս և այլն,

3. ազգակցական տարբեր հարաբերություններ ցույց տվող բառեր՝ դուստր, զաւակ, հայր, հօրեղբայր, մայր, որդի, տղայ, քոյր և այլն,

4. կենցաղի և առտնին հարաբերությունների հետ կապված առարկաների և գործողությունների անվանումներ՝ աղալ, դուռն, լուսնալ, լուսամուտ, խոհանոց, սեմեակ, տուն, ուտել և այլն,

5. արհեստների, մասնագիտությունների, զբաղմունքների անվանումներ՝ այգեպան, բժիշկ, դարբին, զինաւոր, կօշկակար, հնձուր, հովիւ, նաւավար, ներ-

կարար, սափրիչ, վաճառական, վարժապետ, ուսուցիչ և այլն,

6. աշխատանքային գործիքների անվանումներ՝ դանակ, կացին, կռան, մաղ, սղոց, տապար և այլն,

7. սննդամթերքի, մրգերի ու պտուղների, ծառերի, բույսերի անվանումներ՝ աղ, գարի, դեղձնի, ընգուզ, իւղ, լիմոն, խաղող, խոտ, տանձ, ծառ, ծիրան, կաթն, կաղնի, կեչի, հաց, ձմերուկ, միս, նարնջենի, սոխ, վարդ, վարունգ, ցորեան և այլն,

8. ընտանի ու վայրի կենդանիների և թռչունների, ծովային ու ջրային կենդանիների, սողունների անվանումներ՝ ագռաւ, աղաւնի, աղուէս, առիւծ, արջ, աքաղաղ, աքլօր, բադ, բազէ, գայլ, դէֆին ձուկն, եզն, թռչուն, լոր, խոզ, կատու, կարմրախայտ ձուկն, կէտ ձուկն, հաւ, ձուկն, ճանճ, մողես, նապաստակ, շուն, ոչխար, սպիտակ ձուկն և այլն,

9. անձի և առարկայի որակ, հատկանիշ, գործողություն և դրա հատկանիշ ցույց տվող բառեր՝ աղօթել, ասել, ատել, բարձր, գնալ, դեղին, ընկողմնիլ, լուսաւորել, լուրջ, խօսիլ, կապտագոյն, կապուտ, նայել, կարմիր, մեծ, մոխրագոյն, մուք կանաչ, պարկիլ, սառն, սիրել, սպիտակ, փոքր և այլն,

10. դերանուններ, թվականներ, շաղկապներ և այլն՝ այս, դու, եթէ, ես, ինքն, ինչ, ինքս, ինքն, հինգ, մեք, նա և այլն,

11. տարվա եղանակների, շաբաթվա օրերի, ամիսների անուններ և ժամանակ ցույց տվող այլ բառեր՝ ամառն, ամիս, այժմ, այսօր, աշունք, ապրել, երեքշաբաթ օր, երկուշաբաթ օր, ծմեռն, մայիս, մարտ, յուլիս, յունիս, նոյեմբեր, շաբաթ օր, ուրբաթ և այլն:

Երկու բառարանները էականորեն տարբերվում են միմյանցից, քանի որ եթե Սարաֆյանի աշխատությունը պարունակում է և՛ հայերեն-ռուսերեն, և՛ ռուսերեն-հայերեն բաժիններ, ապա Խալդարյանի բառարանը՝ միայն հայերեն-ռուսերեն բաժին, այսինքն՝ Սարաֆյանի բառարանը նախատեսված է և՛ հայ, և՛ ռուս ընթերցողների համար, իսկ Խալդարյանի բառարանը ռուս ընթերցողի համար պիտանի չէ: Ամենայն հավանականությամբ, հենց սա է պատճառը, որ ռուս լեզվաբան Բուլիչը Սարաֆյանի գիրքը ավելի մատչելի է համարում ռուս ընթերցողին, քան Խալդարյանի բառարանը⁶:

Ի տարբերություն Սարաֆյանի՝ Խալդարյանը տեղ չի տալիս

ժողովրդախոսակցական լեզվին և օտարաբանություններին: Քանի որ այս գիրքը գրված է 18-րդ դարի վերջին, զարմանալի է, որ բառարանում գործածված է մաս գրաբարյան բառաշերտը, ինչպես՝ զկնի, անտի, անտուստ, անկարօտ, անդր, ի վարձու կալնուլ, հակակայ, է՛ր, երիցս, երկայն և այլն:

Երկու բառարանները ունեն այլ տարբերություններ ևս: Սարաֆյանի բառարանը ստեղծված է որպես ինքնուսույց, իսկ Խալդարյանի գիրքը սոսկ երկլեզվյան թարգմանական բառարան է, առաջինում հանդիպում են մաս հատուկ անուններ, իսկ Խալդարյանի բառարանում դրանք բացակայում են:

Չմայած երկու բառարանների տպագրությունը կատարվել է չորս ամսվա ընթացքում և նույն տպարանում, սակայն, եթե Խալդարյանի բառարանը կազմվել է՝ ղեկավարվելով բառարանի կազմության այբբենական կարգով, ապա Սարաֆյանի աշխատանքում նշված կարգը չի պահպանվում: Այսպես. Սարաֆյանի գրքում ապրել բառին հաջորդում է ապուխտ, սրան՝ ապստամբ, ապա՝ ապականել, փոխանակ՝ ապականել-ապուխտ-ապստամբ-ապրել հաջորդականությամբ, մի այլ դեպքում ոտնաչափ բառին հաջորդում է ոտանաւոր, սրան՝ ոտնացաւ, ապա՝ ոտնատեղի, փոխանակ՝ ոտանաւոր-ոտնաչափ-ոտնատեղի-ոտնացաւ: Այբբենական հաջորդականության նման խախտումները Սարաֆյանի բառարանում մեծ քանակ են կազմում: Սրան հակառակ՝ Խալդարյանի մոտ նման երևույթներ չեն հանդիպում:

Այսքան տարբերություններով հանդերձ՝ մի քանի ամսվա ընթացքում նույն տիպի (հայերեն-ռուսերեն թարգմանական) երկու բառարանների հրատարակումը ռուսերենի նկատմամբ մեր հայրենակիցների աճող հետաքրքրության ապացույցն է, իսկ Բուլիչի՝ վերը նշված գնահատականը փաստում է, որ իր հերթին Ռուսաստանում էլ աճում է հետաքրքրությունը հայերենի նկատմամբ:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Գ. Գասպարյան, Հայ բառարանագրության պատմություն, Ե., 1968, էջ 115:
2. Կ. Սարաֆյան, Գիրք, որ կոչի բանալի գիտութեան, Ս. Պետերբուրգ, 1788, տիտղոսաթերթից:
3. Անդ:
4. Գ. Խալդարյան, Գիրք, որ կոչի շաւիղ լեզուագիտութեան, Ս. Պետերբուրգ 1788, էջ Ը:
5. Անդ, էջ ԺԱ:
6. Տե՛ս Գ. Գասպարյան, Հայ բառարանագրության պատմություն, էջ 118: